



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«27» դեկտեմբերի 2021 թվականի N 277- Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ
ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ, 19-րդ կետերի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ հոդվածների, «Աղքատության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 14-րդ հոդվածի դրույթներով՝ Գյումրի համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2022 թվականի դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշմամբ հաստատված հավելվածի 11-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկել՝ կիրառելով 0,75 գործակից, 4-րդ ենթակետով սահմանված դրույքաչափը հաշվարկել՝ կիրառելով 0,50 գործակից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 01-ից:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի

Կողմ (22)

Դեմ (0)

Ձեռնպահ (5)

Վ.Սամսոնյան

Գ.Մելիքյան

Լ.Սանոյան

Մ.Սահակյան

Տ.Հովհաննիսյան

Թ.Համբարձումյան

Ն.Պողոսյան

Խ.Վարաժյան

Գ.Թաթարյան

Վ.Հակոբյան

Կ.Սոսյան

Ս.Ադամյան

Գ.Մանուկյան

Ս.Հովհաննիսյան

Ռ.Անդրիասյան

Ս.Խուբետարյան

Ա.Բաղդասարյան

Ա.Պապիկյան

Հ.Նիկողոսյան

Ք.Հարությունյան

Ն.Ղազարյան

Զ.Միքայելյան

Շ.Արամյան

Լ.Մուրադյան

Հ.Մարգարյան

Կ.Մալխասյան

Կ.Ասատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐԻ

ք. Գյումրի
«27» դեկտեմբերի 2021 թվական



ՎԱՐԴԳԵՍ ՍԱՄՍՈՆՅԱՆ

Հավելված՝



Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի
ավագանու 2021թ. դեկտեմբերի 27-ի
N 277-Ն որոշման

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի
վարչական տարածքում սահմանված տեղական տուրքերի և
վճարների դրույքաչափերը**

Հ/Հ	Տեղական տուրքի տեսակը	Համայնքի ավագանու կողմից սահմանված դրույքաչափը (ՀՀ դրամով)
1.	Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.	
1)	հիմնական շենքերի և շինությունների համար՝	
ա.	մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝	տասնհինգ հազար
2)	1-ին կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ չնախատեսված շենքերի և շինությունների համար՝	
ա.	200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	երեսուն հազար
բ.	500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	մեկ հարյուր հազար
գ.	1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	մեկ հարյուր հիսուն հազար
դ.	3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	երեք հարյուր հազար
3)	ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝	
ա.	մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	երեք հազար
բ.	20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	հինգ հազար
2.	Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝	

1)	չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն,	երեք հազար
2)	բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,	
3)	նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:	
3.	Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝	հինգ հազար
4.	Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝	
1)	ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝	
ա.	մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	ինը հազար
բ.	26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	տասներկու հազար
գ.	50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	տասնհինգ հազար
դ.	100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	քսանմեկ հազար
ե.	200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	երեսուներեք հազար
զ.	500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի	քառասունութ հազար

	կազմակերպման դեպքում՝	
2)	օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝	
ա.	մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	ինը հազար
բ.	26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	տասներկու հազար
գ.	50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	տասնհինգ հազար
դ.	100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	քսանմեկ հազար
ե.	200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	երեսուներեք հազար
զ.	500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում:	քառասունութ հազար
5.	Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ մեկ քառակուսի մետրի համար:	հինգ հարյուր քսանհինգ
6.	համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար:	երեք հարյուր հազար
1)	համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում սեղմված բնական գազի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար:	երեք հարյուր հազար
2)	համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար	երեք հարյուր հազար

7.	Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի, մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման	վաթսուհի հազար
----	---	-----------------------

	ծառայության օբյեկտներում տնտեսվարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար:	
8.	Համայնքի վարչական տարածքում, հանրային սննդի կազմակերպման և իրականացման (համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան)՝ տնտեսվարողի գործունեության համար առանձնացված յուրաքանչյուր վայրում հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝	
1)	հիմնական շինությունների ներսում՝	
ա.	մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	չորս հազար ութ հարյուր
բ.	26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	ինը հազար
գ.	50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	տասնհինգ հազար
դ.	100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	տասնութ հազար
ե.	200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	քսանյոթ հազար
զ.	500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	քառասունութ հազար
2)	ոչ հիմնական շինությունների ներսում՝	
ա.	մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	ինը հարյուր
բ.	26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	մեկ հազար ութ հարյուր
գ.	50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	երեք հազար
դ.	100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	վեց հազար
ե.	200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	տասնհինգ հազար
զ.	500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	քսանչորս հազար
9.	Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար:	հիսուն հազար
10.	Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝	
1)	առևտրի օբյեկտների համար՝	յոթանասունհինգ հազար
2)	հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝	մեկ հարյուր հիսուն հազար
3)	բաղնիքների (սաունաների) համար՝	հինգ հարյուր

		հազար
4)	խաղատների կազմակերպման համար՝	մեկ միլիոն
5)	շահումով խաղերի համար՝	հինգ հարյուր հազար
6)	վիճակախաղերի համար՝	երկու հարյուր քսանհինգ հազար
11.	Քաղաքային բնակավայրերում ավագանու որոշմամբ սահմանված տնային կենդանիներ պահելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 1 (մեկ) գլխի հաշվով՝	
1)	խոշոր եղջերավոր անասուններ՝	հինգ հազար
2)	մանր եղջերավոր անասուններ՝	հինգ հազար
3)	խոզեր	հինգ հազար
4)	շներ՝	հինգ հազար
12.	ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ բնակավայրերի սահմաններից դուրս գտնվող պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝	
1)	ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝	երեք հազար
2)	թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝	հինգ հազար երկու հարյուր հիսուն
3)	այլ արտաքին գովազդի համար՝	հազար հինգ հարյուր
4)	սոցիալական գովազդի համար՝	զրո
5)	դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,	
6)	երեք արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.	
13.	Հայաստանի Հանրապետության համայնքների կամ համայնքների կազմում ընդգրկված բնակավայրերի խորհրդանիշները (գինանշանը, անվանումը) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան կամ ապրանքների արտադրության կամ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործընթացներում, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվություն տրամադրելու համար՝ օրացուցային տարվա համար:	մեկ հարյուր հազար
14.	Համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում՝ յուրաքանչյուր մեքենայի համար:	տասը հազար
15.	Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա	հինգ հարյուր հազար

	համար:	
16.	Համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝	կազմակերպման և
1)	3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝	երկու միլիոն հինգ հարյուր հազար
2)	5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝	հինգ միլիոն
3)	7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝	յոթ միլիոն
4)	10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝	տասը միլիոն
17.	Համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝	մեկ հարյուր հազար
18.	Համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝	
1)	կարաոկեի, դիսկոտեկի, բաղնիքի, սաունայի և շոգեբաղնիքի համար՝ օրացուցային տարվա համար՝	երեսուն հազար
2)	հեստապարային ակումբի համար՝ օրացուցային տարվա համար՝	երկու հարյուր հազար
	Տեղական վճարի տեսակը	
19.	Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.	
1)	մինչև 200 (երկու հարյուր) քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ոչ հիմնական շինությունների տեղադրման, ինչպես նաև մինչև 100 (մեկ հարյուր) քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝	տասը հազար
2)	սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար.	
ա.	100-ից մինչև 500 (մեկ հարյուրից մինչև հինգ հարյուր) քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝	քսան հազար
բ.	500-ից մինչև 1000 (հինգ հարյուրից մինչև մեկ հազար) քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝	երեսունհինգ հազար
գ.	1000 (մեկ հազար) և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝	հիսուն հազար
20.	Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.	

1)	մինչև 200 (երկու հարյուր) քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ոչ հիմնական շինությունների տեղադրման, ինչպես նաև մինչև 100 (մեկ հարյուր) քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝	տասը հազար
2)	սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար.	
ա.	100-ից մինչև 500 (մեկ հարյուրից մինչև հինգ հարյուր) քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝	քսան հազար
բ.	500-ից մինչև 1000 (հինգ հարյուրից մինչև մեկ հազար) քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝	երեսունհինգ հազար
գ.	1000 (մեկ հազար) և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝	հիսուն հազար
21.	Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար:	
1)	մինչև 200 (երկու հարյուր) քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ոչ հիմնական շինությունների տեղադրման, ինչպես նաև մինչև 100 (մեկ հարյուր) քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝	տասը հազար
2)	սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար.	
ա.	100-ից մինչև 500 (մեկ հարյուրից մինչև հինգ հարյուր) քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝	քսան հազար
բ.	500-ից մինչև 1000 (հինգ հարյուրից մինչև մեկ հազար) քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝	երեսունհինգ հազար
գ.	1000 (մեկ հազար) և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝	հիսուն հազար
22.	Համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝	տասնհինգ հազար
23.	Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝	երեսուն հազար
24.	Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողներ համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար՝ աղբահանության վճարը սահմանվում է.	
1)	Կենցաղային աղբի համար՝ ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար յուրաքանչյուր ամիս՝	մեկ հարյուր հիսուն
25.	Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության մակերեսի հետևյալ դրույքաչափերով.	

1)	Առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար	յոթանասունհինգ
2) ա.	Հյուրանոցային տնտեսության օբյեկտների, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների (ավտոկայանների, օդանավակայանների, երկաթուղային կայարանների), հանգստյան տների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝	հիսուն
բ.	Բազաների ու ճամբարների, սպորտի համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝	քսան
3)	Վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝	քսան
4) ա.	Գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝	տաս
բ.	Զորանոցների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար	ութ
5)	Արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով (այդ թվում՝ ավտոկայանատեղի)՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝	ութ
6)	Համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճարը համայնքի ավագանին սահմանում է՝	տասը հազար
26.	Համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի հասցեի տրամադրման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.	մեկ հազար
27.	Համայնքի տարածքում պետական իշխանության մարմինների սպասարկման գրասենյակների գործառույթներից բխող՝ համայնքի կողմից տրամադրվող ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի չափով:	
28.	Համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում (բացառությամբ բակային տարածքների, ուսումնական, կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի հարակից տարածքների) ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար տեղական վճարը սահմանվում է.	
1)	յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝	գրո
2)	յուրաքանչյուր մեկ օրվա համար՝	գրո
3)	մեկ շաբաթվա համար՝	գրո
4)	մեկ ամսվա համար՝	գրո
5)	մեկ տարվա համար՝	գրո
29.	Համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափ՝ փոխհատուցման վճարի չափով:	

30.	Համայնքապետարանի աշխատակազմի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար փոխհատուցման վճար:	մեկ հազար
31.	Համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ օրական 1 (մեկ) մասնակցի համար 1 (մեկ) քառակուսի մետրը՝	մեկ հարյուր հիսուն
32.	Համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող՝ ավագանու որոշմամբ հանրային հանգստի վայր սահմանված և համայնքի կողմից կամ համայնքի պատվերով որպես հանրային հանգստի վայր կահավորված տարածքում ընտանեկան կամ գործնական միջոցառումներ անցկացնելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝	զրո
33.	Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի չափով յուրաքանչյուր ամսվա համար.	
1)	«Հապտերիկ» ՀՈԱԿ	ութ հազար
2)	«Ծիածան» ՀՈԱԿ	ութ հազար
3)	«Թոռնիկ Մանուշակ» ՀՈԱԿ	ութ հազար
4)	«Ժպիտ» ՀՈԱԿ	ութ հազար
5)	«Լուսաստղիկ» ՀՈԱԿ	զրո
6)	«Արծազանք» ՀՈԱԿ	ութ հազար
7)	«Լիլիթ» ՀՈԱԿ	ութ հազար
8)	«Նանուկիկ» ՀՈԱԿ	ութ հազար
9)	«Լիանա» ՀՈԱԿ	ութ հազար
10)	«Արևիկ» ՀՈԱԿ	ութ հազար
11)	«Արարատ կրթահամալիր» ՀՈԱԿ	յոթ հազար
12)	«Գոհար» ՀՈԱԿ	ութ հազար
13)	«Փարոս» ՀՈԱԿ	ութ հազար
14)	«Անի պարտեզ» ՀՈԱԿ	ութ հազար
15)	«Կարմիր գլխարկ» ՀՈԱԿ	ութ հազար
16)	«Հենգել և Գրետել» ՀՈԱԿ	յոթ հազար հինգ հարյուր
17)	«Սուրբ Մարիամ» ՀՈԱԿ	ութ հազար
18)	«Գյումրու մանկիկ» ՀՈԱԿ	ութ հազար
19)	«Էյլիթիա» ՀՈԱԿ	ութ հազար
20)	«Ձյունիկ» ՀՈԱԿ	ութ հազար
21)	«Հուսո առաքաստ» ՀՈԱԿ	ութ հազար
22)	«Երազանք» ՀՈԱԿ	վեց հազար
23)	«Անուկիկ» ՀՈԱԿ	ութ հազար
24)	«Զանգակ» ՀՈԱԿ	ութ հազար
34.	Համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական, սպորտի և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի չափով սահմանվում է յուրաքանչյուր ամսվա համար.	
1)	«Ա. Տիգրանյանի անվան թիվ 3 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ՝	

ա.	դաշնամուր	հինգ հազար
բ.	լարային	չորս հազար
գ.	փողային	չորս հազար
դ.	ժողովրդական նվագարան	չորս հազար
ե.	վոկալ	չորս հազար հինգ հարյուր
զ.	կիթառ	հինգ հազար
է.	սովորողների կողմից երկրորդ գործիք, վոկալ ուսուցանելու, ինչպես նաև ուսումնական տարի սովորելու համար ծառայությունից օգտվելու լրացուցիչ վճար՝	տասնութ հազար
2)	«Ա. Բրուսյանի անվան թիվ 4 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ՝	
ա.	դաշնամուր	հինգ հազար
բ.	լարային	երեք հազար
գ.	փողային	երեք հազար
դ.	ժողովրդական նվագարան	երեք հազար
ե.	վոկալ	չորս հազար
զ.	կիթառ	չորս հազար
է.	դիոլ	չորս հազար
ը.	սովորողների կողմից երկրորդ գործիք, վոկալ ուսուցանելու, ինչպես նաև ուսումնական տարի սովորելու համար ծառայությունից օգտվելու լրացուցիչ վճար՝	տասնութ հազար
3)	«Շերամի անվան թիվ 5 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ՝	
ա.	դաշնամուր	վեց հազար
բ.	լարային	հինգ հազար
գ.	փողային	չորս հազար
դ.	ժողովրդական նվագարան	չորս հազար
ե.	վոկալ	վեց հազար
զ.	կիթառ	վեց հազար
է.	սովորողների կողմից երկրորդ գործիք, վոկալ ուսուցանելու, ինչպես նաև ուսումնական տարի սովորելու համար ծառայությունից օգտվելու լրացուցիչ վճար՝	տասնութ հազար
4)	«Ա. Շիշլանի անվան թիվ 6 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ՝	
ա.	դաշնամուր	հինգ հազար
բ.	լարային	չորս հազար
գ.	փողային	չորս հազար
դ.	ժողովրդական նվագարան	չորս հազար
ե.	վոկալ	չորս հազար
զ.	կիթառ	չորս հազար
է.	սովորողների կողմից երկրորդ գործիք, վոկալ ուսուցանելու, ինչպես նաև ուսումնական տարի սովորելու համար ծառայությունից օգտվելու լրացուցիչ վճար՝	տասնութ հազար
5)	«Խ. Ավետիսյանի անվան թիվ 7 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ՝	
ա.	դաշնամուր	չորս հազար

		հինգ հարյուր
բ.	լարային	երեք հազար հինգ հարյուր
գ.	փողային	երեք հազար
դ.	ժողովրդական նվագարան	երեք հազար
ե.	վոկալ	երեք հազար հինգ հարյուր
զ.	սովորողների կողմից երկրորդ գործիք, վոկալ ուսուցանելու, ինչպես նաև ուսումնական աշխատանքներ կողմից դպրոցում ևս 1 կամ 2 ուսումնական տարի սովորելու համար ծառայությունից օգտվելու լրացուցիչ վճար՝	տասնութ հազար
6)	«Ն. Տիգրանյանի անվան թիվ 1 արվեստի դպրոց» ՀՈԱԿ ՝	
ա.	դաշնամուր	հինգ հազար հինգ հարյուր
բ.	լարային	երեք հազար
գ.	փողային	երեք հազար հինգ հարյուր
դ.	ժողովրդական նվագարան	երեք հազար հինգ հարյուր
ե.	վոկալ	հինգ հազար
զ.	կիթառ	հինգ հազար
է.	պարարվեստ	չորս հազար
ը.	գեղմոդելավորում	երեք հազար հինգ հարյուր
թ.	նկարչական/կերպարվեստ	երեք հազար
ժ.	սովորողների կողմից երկրորդ գործիք, վոկալ ուսուցանելու, ինչպես նաև ուսումնական աշխատանքներ կողմից դպրոցում ևս 1 կամ 2 ուսումնական տարի սովորելու համար ծառայությունից օգտվելու լրացուցիչ վճար՝	տասնութ հազար
7)	«Ս. Մերկուրովի անվան նկարչական դպրոց» ՀՈԱԿ ՝	երեք հազար
8)	«Պարարվեստի դպրոց» ՀՈԱԿ ՝	վեց հազար
9)	«Մանկապատանեկան արվեստի պալատ» ՀՈԱԿ ՝	
ա.	«Անի» պարային համույթ՝	մեկ հազար հինգ հարյուր
բ.	«Գյումրի» պարային համույթ՝	մեկ հազար հինգ հարյուր
գ.	«Դեղձանիկ» վոկալ-էստրադային համույթ՝	մեկ հազար հինգ հարյուր
դ.	Վերածնունդ պարային համույթ, դասական պարերի, ժող. գործիքների, դիդախարների, քանոնահարների, քամանչահարների, ժողերգեցողության խմբեր՝	մեկ հազար
ե.	ասմունքի, ասեղնագործության, շյուղագործության, զգեստների մոդելավորման, հելոնագործության, թաղիքագործության, ուլունքագործության, անգլերենի, գոթելենի խմբեր՝	հինգ հարյուր
զ.	սովորողների կողմից երկրորդ գործիք, վոկալ ուսուցանելու, ինչպես նաև ուսումնական աշխատանքներ կողմից դպրոցում ևս 1 կամ 2 ուսումնական տարի սովորելու համար ծառայությունից օգտվելու լրացուցիչ վճար՝	տասնութ հազար

է.	Նկարչական, ավիամոդելային, դուդուկի, կիթարահարների խմբեր	մեկ հազար հինգ հարյուր
10)	«Ստ. Ալիխանյանի անվան տիկնիկային թատրոն» ՀՈԱԿ՝	
ա.	ցերեկային ներկայացում	հինգ հարյուր
բ.	երեկոյան ներկայացում	մեկ հազար
գ.	առաջնախաղի ներկայացում /առաջինից հինգերորդ ներկայացումները/	ութե հարյուր
դ.	արտագնա / հյուրախաղ/ ներկայացում	մեկ հազար
35.	Համայնքի ենթակայության մանկապատանեկան մարզադպրոցների ծառայությունից օգտվողների փոխհատուցման վճարը սահմանվում է յուրաքանչյուր ամսվա համար.	
1)	Գյումրի համայնքի «Մարմնամարզական մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ՝	չորս հազար
2)	Գյումրի համայնքի «Ջրային մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ՝	
ա.	մինչև 6 տարեկան երեխաների համար՝	հինգ հազար
բ.	6-ից բարձր տարիքի համար՝	յոթ հազար
գ.	սիրողական լողորդների 1 ժամի համար՝	մեկ հազար
3)	Գյումրի համայնքի «Պարի և սպորտային պարերի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ՝	հինգ հազար
4)	Գյումրի համայնքի «Աթլետիկայի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ, Գյումրի համայնքի «Ալեքսան Հակոբյանի անվան թենիսի և սեղանի թենիսի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ, Գյումրի համայնքի «Հրաձգության մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ, Գյումրի համայնքի «Ազատ ոճի ըմբշամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ, Գյումրի համայնքի «Արթուր Ալեքսանյանի անվան հունահռոմեական ըմբշամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ, Գյումրի համայնքի «Յուրի Վարդանյանի անվան ծանրամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ, Գյումրի համայնքի «Սամբո-ձյուդոյի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ, Գյումրի համայնքի «Բռնցքամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ, Գյումրի համայնքի «Արամ Սարգսյանի անվան խաղերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ, Գյումրի համայնքի «Շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ, Գյումրի համայնքի «Տիգրան Պետրոսյանի անվան շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ, Գյումրի համայնքի «Համալիր մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ՝	հինգ հարյուր
36.	Համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և համայնքային ենթակայության թանգարանների մուտքի համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի չափով.	
1)	թանգարանների մշտական այցելությունների տոմսի գին՝	յոթ հարյուր
2)	թանգարանների մշտական այցելությունների տոմսի գին դպրոցականների, ուսանողների և թոշակառուների համար՝	երեք հարյուր
3)	Թանգարանների մշտական այցելությունների տոմսի գին օտարերկրացիների համար՝	մեկ հազար
4)	մշտական ցուցադրության այցելության հայերեն լեզվով	մեկ հազար

	բացատրությամբ տոմսի գին սահմանել՝	
5)	մշտական ցուցադրության այցելության օտար լեզվով բացատրությամբ տոմսի գին սահմանել՝	երկու հազար
6)	Թանգարանների ծառայություններից օգտվողների համար սահմանված վճարներից 100 %-ով արտոնություն կիրառելու ենթակա են՝ պետական պատվիրակությունները, ժամկետային զինծառայողները, պատերազմական գործողություններին մասնակցած, ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված զինծառայողների, անհայտ բացակայող ճանաչված, հաշմանդամություն ձեռք բերած անձանց ընտանիքի անդամները, լրագրողները/տեղեկույթ ստանալու նպատակով/, նախադպրոցական տարիքի երեխաները:	
7)	Թանգարանների մշտական ցուցադրության անվճար այցելության արտոնություն սահմանել բոլոր այցելուների համար՝ ամեն ամսվա վերջին շաբաթ օրը.	
8)	Թանգարանների մշտական ցուցադրության անվճար այցելության արտոնություններ սահմանել միայն անձը և կարգավիճակը հաստատող փաստաթղթի առկայության դեպքում.	
37.	Գյումրի քաղաքի վարչական տարածքում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կառուցապատողների միջոցներով շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում, օբյեկտների հարակից տարածքներում և փողոցներում սանիտարական մաքրման գործընթացը կազմակերպելու նպատակով, շինարարության թույլտվություն ձեռք բերելու ժամանակ գանձվող տեղական վճարը սահմանվում է՝	
1)	պետական կամ պետականին հավասարեցված ծրագրերի համար՝ կապալի պայմանագրային գնի 0,1 %-ի չափով,	
2)	այլ կառուցապատողների համար,	
ա.	նախահաշվային փաստաթղթեր ներկայացնելու դեպքում՝ նախահաշվային արժեքի 0,1 %-ի չափով,	
բ.	նախահաշվային փաստաթղթերի բացակայության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության «ՀՀ տարածքում կառուցվող շենքերի, կառուցվածքների և շինարարական աշխատանքների տեսակներ» արժեքի խոշորացված ցուցանիշների ժողովածուի համաձայն հաշվարկված շինարարական աշխատանքների արժեքի 0,1 %-ի չափով:	
38.	Համայնքային սեփականություն հանդիսացող և համայնքի կողմից սպասարկվող ընդհանուր օգտագործման տարածքներում (բացառությամբ ուսումնական, կրթական և առողջապահական հաստատությունների, պետական կառավարման մարմինների վարչական շենքերի հարակից տարածքների)	
1)	շահումով խաղատոմսերի (լոտո) և խաղալիքների շրջիկ վաճառքի կազմակերպման վճար.	
ա.	յուրաքանչյուր ամսվա համար՝	տասնհինգ հազար
բ.	յուրաքանչյուր օրվա համար՝	մեկ հազար
2)	մանկական զվարճանքի վճարովի խաղերի կազմակերպման վճար	
ա.	յուրաքանչյուր ամսվա համար՝	երեսուն հազար
բ.	յուրաքանչյուր օրվա համար՝	մեկ հազար հինգ հարյուր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«27» դեկտեմբերի 2021 թվականի N 278- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
2022-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով՝ Գյումրի համայնքի ավագանին որոշում է.

- Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի զարգացման 2022-2026 թվականների հնգամյա ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի

Կողմ (20)

Դեմ (0)

Ձեռնպահ (7)

Վ.Սամսոնյան

Գ.Մելիքյան

Լ.Սանոյան

Մ.Սահակյան

Տ.Հովհաննիսյան

Թ.Համբարձումյան

Ն.Պողոսյան

Խ.Վարաժյան

Ս.Հովհաննիսյան

Ռ.Անդրիասյան

Ս.Խուրբեսարյան

Ա.Բաղդասարյան

Վ.Հակոբյան

Կ.Սոսյան

Ս.Ադամյան

Գ.Մանուկյան

Հ.Մարգարյան

Կ.Մալխասյան

Կ.Ասատրյան

Ա. Պապիկյան

Հ. Նիկողոսյան

Ք. Հարությունյան

Ն. Ղազարյան

Գ. Թաթարյան

Զ. Միքայելյան

Շ. Արամյան

Լ. Մուրադյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ք. Գյումրի

«27» դեկտեմբերի 2021 թվական




ՎԱՐԴԳԵՍ ՍԱՄՍՈՂՅԱՆ

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Գյումրի համայնքի ավագանու
2021 թվականի դեկտեմբերի 278-Ա N
որոշման



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔ



ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
(2022-2026թթ.)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
2022-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմել է՝ համայնքի ղեկավար



Վ.Սամսոնյան

Հաստատվել է համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 27-ի 278-Ա որոշմամբ

Բովանդակություն

1. Համայնքի տեղական ինքնակառավարմության հիմունքներ	4
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն	6
2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն	6
2.2 Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը	8
2.3 Համայնքում իրականացվող ծրագրեր	15
2.4 Պատվիրակված ծառայություններ	19
2.5 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումներ	20
2.6 Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ	27
2.7 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈԻԹՀՄ) վերլուծություն	31
3 Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում	33
3.1 Համայնքի զարգացման տեսլական	33
3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ	35
4 ՀՀԶԾ ֆինանսավորում	41
5 ՀՀԶԾ մոնիթորինգի անձնագիր	44
6 Հավելվածներ	60

1. Համայնքի ղեկավարի ողջունի խոսք

Հարգելի՛ գյումրեցիներ,

Ողջունում եմ ձեզ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի 2022-2026 թվականների Գյումրի համայնքի հնգամյա զարգացման ծրագրի հաստատման կապակցությամբ:

Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել համայնքի առկա ռեսուրսները (ակտիվները), պարտավորությունները, տեղական առանձնահատկությունները, երկրի տնտեսական և քաղաքական առկա իրավիճակը, ինչպես նաև առաջիկա զարգացումների կանխատեսումները:

Առկա սոցիալ-տնտեսական իրավիճակի պատճառով համայնքի հիմնական խնդիրներն են արտագաղթի բարձր մակարդակը, տնակային պայմաններում ապրող ընտանիքների մեծ թիվը, անբարեկարգ փողոցների, կիսակառույց և վթարային շենքերի առկայությունը:

Համայնքի զարգացման ծրագրի հեռահար նպատակն է համայնքի կայուն զարգացումն առաջիկա հինգ տարիների ընթացքում:

Համայնքի զարգացման հիմնական ուղղություններն են՝ տեղական ինքնակառավարման զարգացումը, մարդկային կապիտալի զարգացումը, փոքր ու միջին ձեռնարկությունների և զբոսաշրջության զարգացման խթանումը:

Առաջիկա հինգ տարիների ընթացքում, ելնելով համայնքի հնարավորություններից, համայնքում իրագործելու ենք նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության և մշակութային կյանքի կազմակերպումը, բնակչության սոցիալական պաշտպանությունը, մարզական կյանքի կազմակերպումը, ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը, թաղամասերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը, հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպումը, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների զարգացումը, պահպանումը և շահագործումը, աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպումը, շրջակա միջավայրի պահպանությունը:

Համայնքում խթանելու ենք գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրությունը, բնակարանային շինարարությունը, զբոսաշրջության զարգացումը, համայնքի հասարակական կյանքին հանրության բոլոր շերտերի մասնակցությունը, բարեգործությունը, մարդասիրությունը:

Ծրագրի նախագծի համար հիմք են հանդիսացել նաև պետական, մարզային, տարածաշրջանային ռազմավարական նշանակության այլ ծրագրեր:

Ծրագրի մշակմանը մասնակցել են համայնքապետարանի աշխատակազմի բոլոր ստորաբաժանումները, ավագանու անդամները, քննարկվել և հաշվի են առնվել հանրային լսումների արդյունքում ընդունելի և իրատեսական համարված բոլոր առաջարկությունները:

Մաղթում եմ բոլորիս հաջողություն ծրագրի բարեհաջող իրականացման գործում:

Համայնքի ղեկավար՝

Վ. Սամսոնյան

2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Գյումրի համայնքի տարածքը 4429 հեկտար է:

Համայնքի ռելիեֆը հարթավայրային է՝ ծածկված լճագետային և հրաբխային շուրջ 350մ հզորությամբ նստվածքներով: Համայնքի տարածքն ակոսվում է Չերքեզի, Ջաջուռի, Գյումրի գետակի և այլ ձորերով: Ռելիեֆը հարթավայրային է՝ ծածկված լճագետային և հրաբխային շուրջ 350մ հզորությամբ նստվածքներով:

Գյումրի քաղաքն ապրել է պատմական զարգացման տարբեր փուլեր և հարուստ է պատմամշակութային ժառանգությամբ:

Քաղաքի կենտրոնական մասը, ինչպես նաև Ախուրյանի ձորը՝ որպես բնական լանդշաֆտի պահպանման տարածք, ընդգրկված են «Կումայրի» պատմաճարտարապետական արգելոց-թանգարանի սահմաններում:

«Մեծ Կումայրի» արգելոց-թանգարանը զբաղեցնում է շուրջ 1300 հա տարածք, որի տարածքում գտնվում է 1170 պատմամշակութային հուշարձան:

Գյումրու օդը կազդուրիչ է ու առողջարար, բուսականությունը տափաստանային է, գետահովիտներում աճում են ակացիա, թխկենի, հացենի և այլ ծառատեսակներ: Համայնքը տարեկան ստանում է մոտ 2500 ժամ արեգակնային լույս և ջերմություն: Մեծ է հորդաբուխ աղբյուրների քանակը, որոնք միասին մեկ վայրկյանում տալիս են 1200 լիտր ջուր:

Որոշ ջրային կառույցների վատ վիճակը, որոնք նախատեսված են մեղմելու միկրոկլիման, ամբողջացնելու համայնքի ճարտարապետական տեսքը և հանդիսանում են համայնքի այցեքարտը: Գյումրու համայնքապետարանի հաշվեկշռում գտնվող 6 ջրային կառույցներից 4-ը վերանորոգվել են և այժմ գործում են:

Համայնքի արևմտյան մասով հոսում է Հայաստանի Հանրապետության ջրառատ գետերից մեկը՝ Ախուրյանը: Գյումրին գտնվում է 8-9 բալանոց սեյսմիկ գոտում: Այստեղ 1840թ. հունիսի 20-ին, 1846թ. մարտի 22-ին, 1926թ. հոկտեմբերի 29-ին, 1988թ. դեկտեմբերի 7-ին տեղի են ունեցել աղետալի երկրաշարժեր՝ մարդկային մեծ զոհերով և նյութական կորուստներով:

Գյումրի համայնքի տարածքը գտնվում է կլիմայական ցուրտ գոտում, որտեղ հունվարի միջին ջերմաստիճանը տատանվում է -5°C մինչև - 12°C, հուլիսին միջին ամսական ջերմաստիճանը՝ 16°C և ցածր: Ձմեռը ցուրտ է, կայուն, և երկարատև ձյան ծածկույթն առաջանում է նոյեմբերի վերջից և վերանում ապրիլի 2-րդ տասնօրյակում:

Գարունը երկարատև է, ցուրտ: Յրտահարությունները միջին տվյալներով ավարտվում են մայիսի 2-րդ կեսից: Ամառը կարճ է, զով և խոնավ՝ փոփոխական եղանակով: Աշունը սառն է: Առաջին կեսում գերակշռում է քիչ ամպամած տաք եղանակը,

երկրորդ կեսը փոփոխական է: Աշնանային ցրտահարությունները սկսվում են սեպտեմբերի վերջին և հոկտեմբերի սկզբին:

Շրջակայքը հարուստ է շինանյութերով՝ տուֆով, բազալտով, դիատոմիտով, կավով, սևահողային արգավանդ դաշտերով:

Գյումրին իր անվանումը վերցրել է Ախուրյան գետի Գյումրիգետ վտակի անվանումից, որը հոսում է համայնքից ոչ հեռու:

Այս տեղանքում մարդիկ բնակվել են սկսած մ.թ.ա. VI դարից: Այս մասին հիշատակել է հին հույն պատմիչ Քսենոփոնը:

Հայկական մատենագրության մեջ Կումայրին (Գյումրու հնագույն անվանումն է) առաջին անգամ հիշատակվում է 773-775թթ.՝ արաբական տիրակալության դեմ ապստամբության հետ կապված: Միջին դարերում Կումայրին արդեն խոշոր բնակավայր է եղել: 1804թ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ (1804-1813թթ.) Կումայրին մտել է Ռուսաստանի կայսրության կազմի մեջ: 1837թ. քաղաքից ոչ հեռու հիմնադրվել է ռուսական ամրոց, նույն թվականին Կումայրի է այցելել կայսր Նիկոլայ I-ը, և Կումայրին վերանվանվել է Ալեքսանդրապոլ՝ ի պատիվ կայսրուհի Ալեքսանդրայի:

1840թ. Ալեքսանդրապոլը պաշտոնապես դարձել է քաղաք, իսկ 1850թ. դարձել է Էրիվանի գավառի Ալեքսանդրապոլի շրջանի կենտրոն: Լինելով սահմանային բերդ-քաղաք, Ալեքսանդրապոլը դարձել է առևտրի և արհեստների կարևոր կենտրոն, հայ մշակույթի խոշորագույն կենտրոն Անդրկովկասում:

1899թ. Թիֆլիս-Ալեքսանդրապոլ, Ալեքսանդրապոլ-Երևան երկաթուղային գծի կառուցումից հետո, որը 1906թ. ձգվեց մինչև Ջուղա և հետո դեպի Թավրիզ, Ալեքսանդրապոլը դարձավ կարևոր երկաթուղային հանգույցներից մեկը:

Դա շրջադարձային պահ է եղել քաղաքի սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքում: Թիֆլիսից և Բաքվից հետո Ալեքսանդրապոլը համարվել է երրորդ ամենամեծ և ամենակարևոր առևտրային կենտրոնը Կովկասում:

1924թ. Ալեքսանդրապոլը վերանվանվել է Լենինական, իսկ 1991թ. սկզբին՝ Կումայրի: 1991թ. սեպտեմբերի 21-ի Հայաստանի անկախության հռչակումից հետո քաղաքին վերադարձվեց իր պատմական անվանումը՝ Գյումրի:

2013թ.-ին Գյումրին ճանաչվել է «ԱՊՀ մշակութային մայրաքաղաք», իսկ 2016թ.-ին՝ «ՀՀ երիտասարդական մայրաքաղաք»:

Համայնքում հաշվառված բնակչության թիվը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ 157,454 է:

Գյումրի համայնքի ժողովրդագրական ցուցանիշները Աղյուսակ 2.1

Հաշվառված բնակչու- յան թիվ	իզական	արական	մինչև 1 տարեկան	1-2 տարեկան	3-5 տարեկան	6-9 տարեկան	10-14 տարեկան	15-17 տարեկան	18-62 տարեկան	63-74 տարեկան	75 և ավելի
----------------------------------	--------	--------	-----------------	-------------	-------------	-------------	---------------	---------------	---------------	---------------	------------


157454	83368	74086	1341	2988	5253	7615	9696	5268	99895	18387	7011
--------	-------	-------	------	------	------	------	------	------	-------	-------	------

ՏԿԵՆ

առ. 01.

2.2.

Աղբյուրը՝ ՀՀ տվյալների շտեմարան, 01. 2020թ.



Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը

Գյումրի համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է 5.434.298,2 հազար ՀՀ դրամ է, ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը 34,4 % է:

Աղբյուր՝ Գյումրու համայնքապետարանի առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժին, առ 21.11.2021 թվական:

Գյումրի համայնքում գործող զբոսաշրջային ընկերությունները

Աղյուսակ 2.2.1

Զբոսաշրջային ընկերություններ	հասցե
Գյումրի Տուր	Անի թաղ 7-րդ փ 2 հենք 5/2
Քրիեիթիվ Քալչր Տուր (Creative Culture Tour)	Սունդուկյան փ., 74
Լայվ Տուր Գյումրի, (Live Tour Gyumri)	Վ. Մարգարյան փ.,
Գյումրի Կոլորիտ Տուր (Gyumri Colorit Tour)	Տերյան փ. 22
Դիսքովեր Գյումրի Տուր (Discover Gyumri Tour)	Գործում է միայն առցանց
Թրավել Գյումրի (Travel Gyumri)	Գործում է միայն առցանց
Սթեյշն Տուր (Station Tour)	Տերյան փ., 94ա
Մտուր Գյումրի (Mtour Gyumri)	Հաղթանակի պողոտա՝ 58/1
Արի Գյումրի (Come to Gyumri)	Իսահակյան փ.
Գյումրի Թրավել Բլաք (Gyumri Travel Club)	Անկախության հրապարակ՝ 9
Շիրակ տուր (Shirak tour)	Հաղթանակի պողոտա 25
«Կադր» Տուրիստական ընկերություն (Kadr Travel Agency)	Գորկի փ., 104
Մեգա Թրավել (MEGA travel)	Տերյան փ., 85 բ
Լիանա Տուր (LIANA TOURS)	Հաղթանակի պողոտա՝ 4
Բյուրիօ Գյումրի (Բյուրիօ Գյումրի)	
Օրիոն Թրավել (Orion Travel)	Գարեգին Նժդեհի փ., 14
Ջեյ Թրավել (JAY Travel)	Խաղաղության ուղակ՝ 3
Շիրակի տուրիզմի զարգացման և հետազոտության կենտրոն (Shirak Tourism R&D center)	Գարեգին Նժդեհի փ., 16 Շիրակի մարզապետարան, 2-րդ հարկ,

Աղբյուրը՝ Գյումրու համայնքապետարան, առ. 01.10.2021 թ.

Գյումրի համայնքի զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող բնական, պատմական և մշակութային հուշարձաններ և այլ հետաքրքրություններ

Պատմաճարտարապետական հուշարձաններ

- «Ալեքսանդրապոլ» բերդը իր հատկանշական բաղադրիչներով
 - Հյուսիսային բերդապահ ամրոցը (Կարմիր աշտարակ)
 - Հարավային բերդապահ ամրոցը (Սև աշտարակ)
 - Արևմտյան Պայտաձեռ ամրոցը
- «Մայր Հայաստան» հուշահամալիրը
- «Պատվո բլուր»-ը
- Գերմանացի ռազմագերիների գերեզմանոցը
- 7-րդ դարի եկեղեցու ավերակները

Ալեքսանդրապոլ-Գյումրու զրոյներին առնչվող հուշարձանային ժառանգությունը

- Ավ. Իսահակյանի տուն-թանգարանը
- Հ. Շիրազի հուշաթանգարանը
- «Երգեր և վերքեր»-ի հրատարակությանը նվիրված հուշակոթող
- Մ. Արմենի հայրական տունը
- Ատրպետի ապրած տունը
- Խ. Դաշտենցի հայրական տունը
- Շ. Կուրդինյանի հայրական տունը

Ճարտարապետական հուշարձաններ

- Ճարտարապետ Գ. Աղաբաբյանի հայրական տունը
- Գարգալոյանների առանձնատունը
- Ճարտարապետ Ա. Թարխանյանի հայրական տունը
- Նախկին ռուսական բանակի սպայական ակումբը
- Կարանյան եղբայրների բնակելի առանձնատունը
- Յուզբաշյանների բնակելի համալիրը
- Նախկին օրիորդաց պրոգիմնազիայի շենքը
- Դրամբյան Զավահիրի օժիտի շենքը
- Առևտրային ուսումնարանի շենքը
- «Պոլոզ Մուկուչ» գարեջրատունը
- Նախկին Խրիմյան դպրոցի շենքը
- Նախկին Սահականուշյան օրիորդաց դպրոցի շենքը

- Կոստանյանների և Տեր-Մարտիրոսյանների բաղնիքները
- Դրամբյանների բնակելի առանձնատունը
- Քեշիշյանների բնակելի առանձնատունը
- Եղիազարյանների բնակելի առանձնատունը («Ուստա Կարո» խաշարան)

**Գյումրի համայնքում գործող հիմնական դպրոցական հաստատությունների
վերաբերյալ տեղեկատվություն Աղյուսակ 2.2.2**

N	Ուսումնական հաստատության անվանումը, կազմակերպա- իրավական ձևը:	Սահմանային տեղերի քանակ	Փաստացի սովորող աշակերտների թիվ
1	Գյումրու N 4 հիմն.	647	336
2	Գյումրու N 5 հիմն.	335	251
3	Գյումրու N 6 հիմն.	800	588
4	Գյումրու N 7 հիմն.	1397	1196
5	Գյումրու N 8 հիմն.	700	313
6	Գյումրու N 9 հիմն.	640	343
7	Գյումրու N 10 հիմն.	1050	276
8	Գյումրու N 11 հիմն	1270	1162
9	Գյումրու N 15 հիմն	650	389
10	Գյումրու N 18 հիմն	670	424
11	Գյումրու N 19 հիմն	360	369
12	Գյումրու N 20 հիմն	650	456
13	Գյումրու N 21 հիմն	420	776
14	Գյումրու N 23 հիմն	1600	1206
15	Գյումրու N 24 հիմն	340	147
16	Գյումրու N 25 հիմն	570	718
17	Գյումրու N 27 հիմն	490	365
18	Գյումրու N 28 հիմն	468	470
19	Գյումրու N 29 հիմն	950	447
20	Գյումրու N 30 հիմն	240	170
21	Գյումրու N 31 հիմն	297	287
22	Գյումրու N 38 հիմն	260	273
23	Գյումրու N 40 հիմն	180	320
24	Գյումրու N 41 հիմն	499	584
25	Գյումրու N 43 հիմն	38	27
	ԸՆԴԱՄԵՆԸ	15521	11893

Աղբյուրը՝ ՀՀ Շիրակի մարզպետարան, առ 24.11.2021թ

Գյումրու նախադպրոցական ուսումնական հաստատությունների երեխաների թիվը և շենքերի նախագծային հզորությունը

Աղյուսակ 2.2.3

Նախադպրոցական ուսումնական հաստատություններ	շենքինախագծ.հզոր. (երեխաներիթիվ)	փաստացիերեխաներիթիվ
«Լապտերիկ» ՀՈԱԿ	180	101
«Ծիածան» ՀՈԱԿ	120	106
«Թոռնիկ Մանուշակ» ՀՈԱԿ	150	100
«Ժպիտ» ՀՈԱԿ	160	141
«Լուսաստղիկ» ՀՈԱԿ	175	96
«Արձագանք» ՀՈԱԿ	150	108
«Լիլիթ» ՀՈԱԿ	130	42
«Նանուլիկ» ՀՈԱԿ	75	56
«Լիանա» ՀՈԱԿ	100	84
«Արևիկ» ՀՈԱԿ	100	111
«Արարատ կրթահամալիր» ՀՈԱԿ	180	92
«Գոհար» ՀՈԱԿ	130	112
«Փարոս» ՀՈԱԿ	120	120
«Անի պարտեզ» ՀՈԱԿ	160	159
«Կարմիր գլխարկ» ՀՈԱԿ	55	50
«Հենգել և Գրետել» ՀՈԱԿ	120	80
«Սուրբ Մարիամ» ՀՈԱԿ	75	-
«Գյումրու մանկիկ» ՀՈԱԿ	75	51
«Էյլիթիա» ՀՈԱԿ	180	107
«Ջյունիկ» ՀՈԱԿ	160	113
«Հուսո առագաստ» ՀՈԱԿ	175	144
«Երազանք» ՀՈԱԿ	80	66
«Անուլիկ» ՀՈԱԿ	110	61
«Զանգակ» ՀՈԱԿ	75	-
ԸՆԴԱՄԵՆԸ	3035	2100

Աղբյուրը՝ ՀՀ Գյումրու համայնքապետարան, առ 11.11.2021թ.:

Գյումրու արտադպրոցական կրթական հաստատությունների աշակերտների թիվը և շենքերի նախագծային հզորությունը

Աղյուսակ 2.2.4

Մարզադպրոցներ	Շենքինախագծ.հզոր. (աշակերտներիթիվ)	Փաստացի աշակերտներիթիվ
Գյումրի համայնքի «Մարմնամարզական մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	150	210
Գյումրի համայնքի «Համալիր մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	150	156

Գյումրի համայնքի «Շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	200	247
Գյումրի համայնքի «Ալեքսան Հակոբյանի անվան թենիսի և սեղանի թենիսի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	100	182
Գյումրի համայնքի «Արամ Սարգսյանի անվ. խաղերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	200	275
Գյումրի համայնքի «Ազատ ոճի ըմբշամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	200	244
Գյումրի համայնքի «Արթուր Ալեքսանյանի անվ. հունա-հռոմեական ըմբշամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	180	228
Գյումրի համայնքի «Սամբո-ձյուդոյի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	150	185
Գյումրի համայնքի «Բոնցքամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	150	176
Գյումրի համայնքի «Զրային մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	200	183
Գյումրի համայնքի «Յու. Վարդանյանի անվան ծանրամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	140	147
Գյումրի համայնքի «Հրաձգության մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	Վարձակալական հիմունքներով	82
Գյումրի համայնքի «Աթլետիկայի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	Վարձակալական հիմունքներով	154
Գյումրի համայնքի «Տիգրան Պետրոսյանի անվան շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	Վարձակալական հիմունքներով	192
Գյումրի համայնքի «Պարի և սպորտային պարերի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	Վարձակալական հիմունքներով	118
ԸՆԴԱՄԵՆԸ	1820	2779

Երաժշտական, պարարվեստի և գեղարվեստի դպրոցներ	Շենքինախագծային հզոր. (ուսանողների թիվ)	Փաստացի ուսանողների թիվ
Ն. Տիգրանյանի անվ. թիվ 1 արվեստի դպրոց	210	365
Ա. Տիգրանյանի անվ. թիվ 3 երաժշտական դպրոց	100	150
Ա. Բրուսյանի անվ. թիվ 4 երաժշտական դպրոց	300	165
